տակ, զի մի միւսանգամ բռնասցին այլազգիքն 'ի վերայ միաբանացն Հայոց, և լիցին առիթ վնասուց և տուգանաց։ Եւ նորա հաւանեալ՝ արար այնպէս։ Գրեցաւ հրովարտակ ըստ այնմ մտաց, զի այլազգիք Սիոնի այլ եւս մի՛ հակառակեսցին վասն տեղեացն այնոցիկ, ՌՌԽԷ (1721)։

Ի սմին ժամանակի կարի զօրացեալ էին բռնութիւնք և անիրաւ պահանջք բնակչաց ոմանց Բեթղեհէմ գիւղի։ Իսկ աթոռակալ Հաննա վարդապետ կամեցեալ զիրսն դարմանել, բանս եդ ընդ փոխանորդաց Յունաց և Լատինաց։ Եւ նոքա դիւրաւ անասցին բանից նորա եւ միաբանեցան, զի եւ ինքեանք չէին զերծ 'ի բռնութենէ անտի։ Ապա 'ի խորհրդեան սահմանեցին առնել, զոր միանգամ հարկն պահանջէր ըստ տանելոյ ժամանակին։ Կոչեցին զգլխաւորս իւրաքանչիւր թաղի աւանին Բեթղեհէմի՝ 'ի քրիստոնէից և յայլազգեաց, որք կոչէին Շէյխք, և առաջի եդին նոցա զայսոսիկ պայմանս։

1°. Յաւուր տօնի ծննդեան Քրիստոսի առնուլ յիւրաքանչիւր վանաց 600 դահեկան իբրեւ պարգեւ, և աւելի քան զայն մի ինչ պահանջել, և լինիլ երաշխաւոր գիւղականաց մեծի և փոքու։ Չնեղել և չհակառակիլ վանօրէից եւ միաբանաց։ Չյափշտակել 'ի ճանապարհի և 'ի դրունս վանօրէից զպարէնս նոցա, որք առաքին յԵրուսաղեմ։

2°. Եթէ ոք 'ի գիւղականաց կարգեսցի 'ի պաշտօն հարկահանութեան, մի երբէք վիճեսցէ և կռուեսցի ընդ փոխանորդս երից ազգաց։ Եւ եթէ յանդգնեսցի ոք, տուժեսցէ 200 դահեկան։

3°. Զյուղել և չգրգռել զվաղեմի և զանցեալ դատս, և չյարուցանել վէճս 'ի վերայ վանօրէից։ Եւ եթէ 'ի ճանապարհի պատահեսցի ինչ գրաստուց իւրեանց, զոր տուեալ են 'ի վարձու, չպահանջել զվնասն 'ի վերելեկաց նոցին, ոչ 'ի վանօրէից և ոչ 'ի միաբանաց։

4°. Չվաճառել ինչ բռնութեամբ վանօրէից, որպիսիք են՝ փայտ, ածուխ, խաղող և այլ սոցին նման իրք։ ԵՒ 'ի գնելն զայնոսիկ միաբանաց ըստ կամաց իւրեանց, մի արկցեն խռովութիւն 'ի մէջ գնողին և վաճառողին, և մի կաքեսցեն ընդ նոսա։

5°. Եթէ տուգանք կամ որ և իցէ պահանջք հասեալ